գրուեցաւ 'ի դրունս մայրաքաղաքին յերևանու, յայսմ աւուր մարտի ամսի չորս, յամի Տեառն փրկչին մերոյ Քրիստոսի 1773։

'ի Սահակ բագրատունի. ○

Օրինակ 'ի հրովարտակի եղեալ 'ի Նախարարաց։

ԳԼՈՒԽ ՂԲ.

Կամիւն ամենակարողին Յաստուծոյ Սմբատ նախարար Հայոց, Թորգոմանց, ալանաց և այլն, հրամայէ քեզ Տեառն Սիմէօն քաջ սպարապետիդ Հայոց պատրաստիլ խումբս և կազմել դունդս զօրաց երիս զօրութեամբ անպակաս զէն և զասպարիւք համահաւասար այր և ձիով, հրացիւք և հրացի զինուք երիս զօրագլխիւք երեսուն և երիս հազարի զինուորօք, ապա խաղացոյ դունդ մի 'ի երիս զօրութեան առ յաշխարհն տուրուբերան 'ի դաշտն բերկրի 'ի թիկուն աղթամար ծով, զի կացցեն պատրաստ ընդ դէմ պարսից, և դունդն երկրորդ խաղացոյ առ յարևմուտ աշխարհն երկրորդ հայոց 'ի դաշտն սեվասա զի կացցեն պատրաստ ընդ դէմ Յունաց, և դունդն երրորդ պահելով պատրաստ 'ի դաշտին արարատեան 'ի ժամանակի հարկաւորութեան, և տուր հրաման զօրագլխաց իմոց ընդդիմանալով սաստեսցեն ամենայն զօրութեան պարսից և յունաց, զի ոչ ոք